

Կ Ա Ր Ծ Ի Ք

Ավետ Սուրենի Ավետիսյանի «Վասպուրականի մանրանկարչության ոճա-պատկերագրական առանձնահատկություններն ըստ Հովհաննես Խիզանցու, Զաքարիա Ավանցու և Մեսրոպ Խիզանցու ստեղծագործությունների (ԺԴ դարի վերջ – ԺԷ դարի առաջին կես)» ատենախոսության մասին, ներկայացված ԺԷ. 00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդին, թեկնածուական աստիճանի պաշտպանության համար

Հայկական միջնադարյան արվեստը, այդ թվում և մանրանկարչությունը, հայ և օտարազգի գիտնականների կողմից բավականին ուսումնասիրված բնագավառներից է, սակայն կան բազմաթիվ խնդիրներ, որոնք պատշաճ հետազոտության կարիք ունեն։ Այս առումով գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ավետ Ավետիսյանի ատենախոսության թեման և հետազոտության նպատակը։ Այն է՝ երեք նշանավոր նկարիչների՝ Հովհաննես Խիզանցու, Զաքարիա Ավանցու և Մեսրոպ Խիզանցու արվեստի ուսումնասիրության միջոցով բացահայտել ու հիմնավորել Վասպուրականի մանրանկարչության ոճա-պատկերագրական առանձնահատկությունները, ժամանակի ընթացքում դրանցում տեղի ունեցած փոփոխությունները՝ լրացնելով հայ միջնադարյան արվեստի պատկերագրության և խորհրդաբանության տեսությանը վերաբերող հրապարակումները։

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, համապատասխան տրոհումներ պարունակող երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործած աղբյուրների ու գրականության ցանկից և հավելվածից։ Ներածության մեջ հանգամանալից հիմնավորվում է ուսումնասիրության

արդիականությունը, բնորոշվում առարկան ու թեմայի մշակվածության աստիճանը, ներկայացվում հիմնահարցի հետազոտության նպատակն ու խնդիրները: Յուրաքանչյուր գլուխ նվիրված է մի նկարչի արվեստի ուսումնասիրությանը, որում տվյալ ծաղկողի ստեղծագործությունների և կոնկրետ ձեռագրի մանրակրկիտ քննությունը բացահայտում է նկարագարդման համակարգի, ոճի և կիրառված պատկերազրական տարբերակի ու տերունական շարքի տեսարանների մեկնաբանման առանձնահատկությունները, վեր հանելով տարբեր դպրոցների արվեստի փոխազդեցությունների ու նորամուծությունների դրսևորումները: Արվեստաբանական վերլուծություններն ու եզրահանգումները հիմնված են պատմական սկզբնաղբյուրների, ձեռագրերի հիշատակարանների, Ավետարանի բնագրերի ու մեկնողական գրականության հետազոտության հիման վրա և կատարված են հայկական գրքարվեստի տարբեր դպրոցների բնորոշ գեղարվեստական ոճերի ու պատկերաստեղծման սկզբունքների, քրիստոնեական արվեստի պատկերազրության խորագույն իմացությամբ:

Ավետ Ավետիսյանը հետազոտելով տարբեր հավաքածուներում գտնվող ութ տասնյակից ավելի հայկական ձեռագրեր՝ հիմնական գծերով բնութագրում է Վասպուրականի մանրանկարչական դպրոցի գեղարվեստական և պատկերազրական առանձնահատկությունները, մանրամասն ներկայացնում Հովհաննես Խիզանցու, Զաքարիա Ավանցու և Մեսրոպ Խիզանցու ստեղծագործական ժառանգությունը: Կարևորվում է նաև այն, որ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված նոր տեղեկություններով լրացվում և ամբողջացվում են վերոհիշյալ նկարիչների կենսագրական տվյալները, ի մի է բերվում նրանց ձեռագրական ժառանգության ընդհանուր պատկերը:

Ուսումնասիրության նյութի մշակվածության աստիճանը, ընդգրկման շրջանակը, աշխատանքի շարադրանքի տրամաբանական կառուցվածքը, յուրաքանչյուր գլխի վերջում տրված եզրահանգումները հավաստումն են, որ կատարվել է երկարատև ու մանրակրկիտ աշխատանք և նաև այն, որ թեման շատ հոգեհարազատ է Ա. Ավետիսյանին: Դրա վկայությունն են նրա

հրատարակած բազմաթիվ գիտական հոդվածներն ու այլոմ-
ուսումնասիրությունները: Մենք գործ ունենք պատասխանատվության մեծ
զգացում և գիտական աշխատանքի փորձ ունեցող արվեստաբանի հետ:

Ներկայացնեմ մի քանի դիտողություններ ու առաջարկություններ, որոնք
հիմնականում տեխնիկական բնույթի են:

1. Ատենախոսության մեջ նշվում է, որ Զաքարիա Ավանցին տերունական
պատկերաշարի մանրանկարներներում հետևում է Մինաս Ծաղկողի՝
դեռևս ԺԵ դարում Վասպուրականի մանրանկարչություն ներմուծած
պատկերագրական կազմին, որը հատուկ էր Կիլիկյան արվեստին:
Ցանկալի կլիներ կոնկրետ օրինակների հիման վրա զուգահեռներ
անցկացնել Կիլիկյան այն ձեռագրերի նկարագարդումների հետ,
որոնցում դրսևորվում են կիլիկյան ավանդույթների շարունակումն ու
տեղայնացումը Վասպուրականում:
2. Հավելվածում ներկայացված նկարների շարքը կարելի էր
ամբողջացնել ոչ միայն տվյալ նկարիչների այլ ձեռագրերի, այլև
ուսումնասիրված հեղինակների ստեղծագործությունների
վերատպություններով, որն ավելի տեսանելի կդարձներ
հետազոտության նյութը:

Այս դիտողություններն ու առաջարկությունները կրում են գործնական
նշանակություն և ամենևին չեն ստվերում գիտատեսական պատշաճ
մակարդակով կատարված ուսումնասիրությունը:

Գտնում եմ, որ Ավետ Սուրենի Ավետիսյանի «Վասպուրականի
մանրանկարչության ոճա-պատկերագրական առանձնահատկություններն ըստ
Հովհաննես Խիզանցու, Զաքարիա Ավանցու և Մեսրոպ Խիզանցու
ստեղծագործությունների» (ԺԴ դարի վերջ – ԺԷ դարի առաջին կես) թեմայով
ատենախոսությունն իր գիտական պատշաճ մակարդակով լիովին
համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական
աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ
բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ

ատենախոսը միանգամայն արժանի է ԺԷ. 00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 մասնգիտական խորհրդի հարգարժան անդամներին:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝



Քնարիկ Ավետիսյան
արվեստագիտության թեկնածու, դոցենտ

ՀԳՊԱ Արվեստագիտության և
հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ

23.06.2021

Հաստատում եմ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Քնարիկ Ավետիսյանի ստորագրությունը

ՀԳՊԱ գիտքարտուղար՝



Անահիտ Օհանյան



23.06.2021